ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մայիսի 2023 թվականի N 751 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1604-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «Ավտոկայարանային գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 1604-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.

1) որոշման նախաբանում «1-ին մասի» բառերը փոխարինել «1-ին և 4-րդ մասերի» բառերով.

2) որոշման հավելվածի՝

ա. 10-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10.1-ին կետ՝

«10.1. Ավտոկայարանների և ավտոկայանների շենքերն ու շինությունները, դրանց հարող տարածքները պետք է կազմակերպվեն հաստատված նախագծա-

յին լուծումներին համապատասխան՝ հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում գործող նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի հիմնական իրավակարգավորումները երկրաշարժադիմացկունության, քաղաքացիական պաշտպանության, հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության, կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության (էներգաարդյունավետության և էներգախնայողության, տարածքների համալիր բարեկարգման-կանաչապատման) միջոցառումների կատարման պարտադիր պահանջները:»,

բ. 16-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 16.1-ին կետ՝

«16.1. Ավտոկայարանների և ավտոկայանների շենքերի և շինությունների ներքին մակերեսների (այդ թվում՝ սպասասրահների, դրամարկղերի, սանհանգույցների, բուժկետերի, ուղևորային հարթակների և սպասարկման այլ ծառայությունների համար նախատեսված սենքերի) հարդարումն ու կահավորանքը, տեխնիկական միջոցներն ու սարքերը, դրանց տեղաբաշխումը պետք է իրականացվի հաստատված նախագծային լուծումներին համապատասխան՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության և խելամիտ հարմարեցումների ապահովման պայմանով՝ հիմք ընդունելով քաղաքաշինության և առողջապահության ոլորտներում գործող շինարարական և սանիտարական նորմերն ու կանոնները:»,

գ. 22-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 23-րդ կետ՝

«23. Ավտոկայարանները և ավտոկայանները պետք է ապահովեն համապատասխան միջոցներով տարբեր խմբերի հաշմանդամություն ունեցող անձանց անհրաժեշտ տեղեկատվության հասանելիությունը և արդյունավետ կողմնորոշման հնարավորությունը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

18.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ